ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 օգոստոսի 2012 թվականի N 702

ՀԱՅԿ ՌԱԶՄԻԿԻ ԲԵԼԼՈՒՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 20-րդ և 21-րդ կետերը, Հրազդան քաղաքի ավագանու 2012 թվականի օգոստոսի 20-ի թիվ 96 որոշումը և Հայկ Բելլույանի 2012 թվականի հունիսի 26-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 76-րդ շենքի թիվ 33 բնակարանի բնակիչ Հայկ Բելլույանին սեփականության իրավունքով պատկանող /սեփ. իրավունքի գրանցման վկայական թիվ 2637109, տրված 2011 թվականի հուլիսի 20-ին/ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 4-րդ փողոց 5/1 հասցեում գտնվող առնտրի սրահի ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել Հրազդանի քաղաքին սեփականության իրավունքով պատկանող/սեփ. իրավունքի գրանցման վկայական թիվ 27082012-07-0402, տրված 2012 թվականի օգոստոսի 27-ին/ Միկրոշրջան թաղամաս, 4-րդ փողոց 5/2 հասցեում գտնվող 30.0քմ ընդհանուր մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը:
2.Հայկ Բելլույանի հետ 30.0քմ ընդհանուր մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական, տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժիններին:
3.10-օրյա ժամկետում հողամասի կադաստրային արժեքը՝ 38000/երեսունութ հազար/ դրամ գումարը չվճարելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*